ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 2 - ՐԴ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ /ՊՈԱԿ/

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ժողովրդավարական Պետություն և Քաղաքացիական Հասարակություն

ԱՌԱՐԿԱ՝ Հասարակագիտություն

ԿԱՏԱՐՈՂ՝ Ալինա Սարգսյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոց

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.Մարտիրոսյան

ԿԱՊԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն ----------3

Հիմնական մաս ----------5

Եզրակացություն ----------15

Գրականության ցանկ ----------17

Ներածություն

Հասարակագիտություն առարկան լուրջ առաքելություն ունի քաղաքացիական դաստիարակության, քաղաքացու ձևավորման գործում:Հասարակագիտության առարկայի ն պատակները ներառում են գիտելիքների հմտությունների և արժեքների ուսուցում:Նպատակն է նաև դաստիարակել իր իրավունքներն իմացող , դրանց համար պայքարող, իր պարտականություններն ու պատասխանատվությունը գիտակցող , իրավական մշակույթ ունեցող իսկական քաղաքացի:

Եթե ցանկություն ունենաք, ապա մենք կսովորենք նաև ժողովրդավարություն և իրավունք՝ բարու և արդարության արվեստ , որոնք շատ անհրաժեշտ են մեր հայրենիքի բարգավաճման գործում: Հասարակագիտություն» առարկայի նպատակն է ձևավորել հիմնարար արժեքներ կրող, հուզական հասունություն դրսևորող, կշռադատող, մարդու և հասարակության հիմնահարցերը գիտականորեն ընկալող, հետազոտող և մեկնաբանող, ճանաչողական, սոցիալական և անհատական կարողությունների ու հմտությունների տիրապետող, ազգային և համամարդկային հիմնախնդիրներին իրազեկ, ազգային ու համամարդկային արժեքներ կրող, ժողովրդավարական և կայուն զարգացման արժեհամակարգով առաջնորդվող, սոցիալապես ակտիվ քաղաքացի[1]:

Կրթությունը անձի ու որակը բնութագրող հատկանիշ է: Կրթության հանաշխարհային գերխնդիրը սովորածը ուրիշին սովորեցնես և կարողանաս դրա վրա ավելացնել: Կրթության հիմնական նպատակը գիտելիքների հարստացում է և հաջորդ սերունդներին փոխանցելն է:

Հասարակագիտություն առարկայի ուսցուման միջնակարգ դպրոցի վերջնարդյունքներն են՝

Նկարագրի տարբեր ժամանակաշրջանների բնական միջավայրի, հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումների փոխկապվածությունը:

Տարբերակի և համեմատի աշխարհաճանաչողության ձևերը և դրանց առանձնահատկությունները:

Գիտակցի հիմնավորված և կշռադատված որոշումների կայացման կարևորությունը:

Պլանավորի և կառավարի անձնական ֆինանսական միջոցներն ու ռեսուրսները:

[1] Հանրակրթության մասին ՀՀ օրենքը:

Բացատրի գիտելիքի կարևորությունը, սովորելիս դրսևորի կամք և վստահություն սեփական ուժերի նկատմամբ[2]:

Նկարագրի մարդու հիմնախնդիրը հասարակական տարբեր գիտությունների տեսանկյունից և այլն:

Վերլուծի ժամանակակից մարտահրավերներին արդյունավետ դիմակայող հասարակությանը բնորոշ հատկանիշները:

Բացատրի քաղաքական գաղափարախոսությունների նշանակությունը հանրային կյանքում:

Տարբերակի միջազգային իրավունքի աղբյուրները, դիտարկի պետությունների և միջազգային իրավունքի հարաբերությունները, վերլուծի այդ հարաբերությունները ՀՀ-ում և գլոբալ խնդիրների համատեքստում:

Առարկայի **առանցքային գաղափարներն են.**

- անհատ-հասարակություն փոխազդեցությունը,

- հասարակության էվոլյուցիան (*զարգացումը*),

- հիմնարար արժեքների նշանակությունը,

- մարդկության գլոբալ (*համաշխարհային*), հիմնախնդիրները:

Հետազոտություն նպատակը

<<ժողովրդավարական պետության և քաղաքացիական հասարակություն> թեմայի ուսուցման արդյունավետ պայմանները դպրոցում :

Հետազոտության խնդիրները՝

Սահմանել և մեկնաբանել ժողովրդավարական պետություն և քաղաքացիական հասարակության հասկացությունները: Ուսումնասիրելով << ժողովրդավարական պետություն և քաղաքացիական հասարակություն >> թեման սովորողների մոտ հնարավորություն է ընձեռնվում արտահայտել սեփական կարծիքը դրանց վերաբերյալ պետական խորհրդանիշների, քաղաքական ակտիվության ,հասարակակն ակտիվության, , հոգատար վերաբերմունքի և այլի վերաբերյալ:

[2] Հանրակրթության պետական չափորոշիչ, հաստատված ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ

Հիմնական մաս

Ժողովրդավարական պետությունը՝ ժողովրդի իշխանության քաղաքական կազմակերպություն է , որն օրենքի հիման վրա ապահովում է քաղաքացիների հավասար մասնակցությունը պետական և հասարակական գործերի կառավարմանը ,պետության հիմնական մարմինների ընտրովիությունը, մարդու իրավունքների կենսագործումը և պաշտպանությունը;

Ժողովրդի կառավարման հետ փոխկապակցված են մի շարք այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ օրինականություն, քաղաքական և սոցիալական հավասարություն, ազատություն, ինքնորոշման իրավունք, մարդու հիմնարար իրավունքներ և այլն:

Ժողովրդավարությունն առաջին հերթին պետության ձև է:Հին հունաստանում ժողովրդավարությունը հասկացվում էր որպես պետության հատուկ ձև , որի դեպքում իշխում էր ոչ թե մեկ անձը / միապետ, բռնապետ/ կամ անձանց խումբը / արիստոկրատիան, այլ պետության կառավարմանը մասնակցելու հավասար իրավունք ունեցող բոլոր քաղաքացիները:Ժողովուրդը չի կարող իր բան ու գործը թողած իրականացնել իրեն պատկանող իշխանությունը:Այդ պատճառով նա իշխանությունը փոխանցում է պետությանը:

Շատ հասարակություններ պետությունների կողմից կառավարվել են հազարամյակներով, մինչդեռ որոշները եղել են պահանջազուրկ հասարակություններ: Ժամանակի ընթացքում կառավարման բազմաթիվ ձևեր են զարգացել իրենց գոյության իրավունքը հիմնավորելով ամենատարբեր արդարացումներով ինչպես օրինակ Թագավորների աստվածային իրավունքը, հասարակական պայմանագրի տեսությունը և այլն): 21-րդ դարում ժամանակակից ազգ-պետությունը պետության գերիշխող ձևն է, որի սուբյեկտ է հանդիսանում ժողովուրդը[3]:

Ժողովրդավարության արժեքեքներն են՝

Ժողովրդավարությունը որպես ինքնուրույն ինստիտուտ եղել է այլ արժեքների վրա ազդելու վերլուծության առարկա:

- օգնում է մարդկանց պաշտպանել իրենց իրավունքները,
- օգնում է կրճատել հեռավորությունը մարդկանց և իշխանության միջև,

[3] Հասարակագիտություն: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի 8–րդ դասարանի համար/ Ա. Գյուլբուդաղյան, Կ. Հարությունյան, Տ. Թովմասյան.- Եր.: «Զանգակ» հրատ., 2018

- այն քաղաքական ղեկավարությանն օգնում է ստանալ ավելի ընդգրկուն տեղեկատվություն,
- հնարավորություն է տալիս մարդկանց ապրել իրենց անձնական օրենքներով,
- երաշխավորում է մարդու իրավունքների և անձնական ազատությունների լայն մտահորիզոնը,
- մարդկանց իրենց քաղաքական որոշումների համար ընձեռում է բարոյական պատասխանատվություն,
- հնարավորություն է տալիս բոլոր իրավահավասար քաղաքացիներին, անկախ ռասայից, հենդերային հատկանիշներից, ծագումից, հասարակության մեջ առկա դիրքից և համոզմունքներից մասնակից լինել քաղաքական որոշումների կայացման գործընթացին,
- այն նպաստում է հնարավորությունների հավասարությանը, սոցիալական շարժունակությանը, ինչպես նաև սոցիալական անհավասարության նվազմանը,
- միայն նա կարող է ապահովել քաղաքական հավասարություն, երբ բոլոր քաղաքացիներն քաղաքական որոշումների կայացման գործընթացի վրա ունեն հավասար հնարավորություններ,
- Ժողովրդավարական քաղաքներն ունեն ավելիու հարուստ լինելու միտում և ի տարբերություն ոչ ժողովրդավարական պետությունների՝ ունեն մարդկային զարգացման առավել բարձր մակարդակ,

Ժողովրդավարական պետությունները համամատաբար ավելի քիչ են պատերազմում միմյանց հետ[4]:

Վերոնշյալ պնդումները շատ հաճախ հակառակորդների կողմից ընկալվում են իբրև ժողովրդավարության բացասական կողմեր: Այսպիսով ժողովրդավարության դեմ առաջ են քաշվում հետևյալ փաստարկները

- այն որոշակի խմբերին հնարավորություն է ընձեռում առաջ քաշել իրենց շահերը՝ օգտահործելով մյուսներին, ինչը նպաստում է փոխվստահության վատթարացմանը,

[4] Ինչպես կարող են բոլոր ուսուցիչները օժանդակել քաղաքացիության և մարդու իրավունքների կրթությանը. կոմպետենցիաների զարգացման շրջանակ, Եվրոպայի խորհրդի հրատարակություն

- նպաստում է մեծամասնության կողմից փոքրամասնության վրա դիկտատուրա հաստատելու հնարավորությանը,
- որոշումներ կայացողները դառնում են այն խմբերը, որոնք չեն տիրապետում բավարար տեղեկատվությանը,
- այն արդյունավեր չէ տնտեսության առումով:

ժողովրդավարության տեսակները

Կան ժողովրդավարության տարբեր տեսակներ, որոնք տարբերվում են իշխանության իրականացման և քաղաքական որոշումների կայացման եղանակով: Ահա ժողովրդավարության ամենատարածված տեսակներից մի քանիսը[5].

- **ներկայացուցչական ժողովրդավարություն.** Ժողովրդավարության այս տեսակում քաղաքացիներն ընտրում են ներկայացուցիչներ՝ իրենց անունից որոշումներ կայացնելու համար: Ներկայացուցիչները ընտրվում են պարբերական ընտրությունների միջոցով և պատասխանատու են քաղաքացիների օգտին որոշումներ կայացնելու համար:
- **ուղղակի ժողովրդավարություն.** Ուղղակի ժողովրդավարության պայմաններում քաղաքացիները ուղղակիորեն մասնակցում են քաղաքական որոշումների կայացմանը՝ առանց ներկայացուցիչների կարիքի: Դա ձեռք է բերվում հանրաքվեների, ժողովրդական խորհրդակցությունների կամ ժողովների միջոցով, որոնցում քաղաքացիները քննարկում և որոշում են քաղաքական հարցերը:
- **Մասնակցային ժողովրդավարություն.** Մասնակցային ժողովրդավարությունը ձգտում է խրախուսել քաղաքացիների ավելի մեծ մասնակցությունը քաղաքական որոշումների կայացմանը: Բացի ներկայացուցիչների ընտրությունից, խթանվում է քաղաքացիների ակտիվ մասնակցությունը հանրային քաղաքականության վերաբերյալ քննարկումների, խորհրդակցությունների և բանավեճի գործընթացներին:
- **խորհրդակցական ժողովրդավարություն.** Խորհրդակցական ժողովրդավարության մեջ ընդգծվում է երկխոսության և հանրային բանավեճի կարևորությունը: Քաղաքացիները հանդիպում են՝ քննարկելու քաղաքական հարցեր՝ նպատակ ունենալով կայացնել տեղեկացված և համաձայնեցված որոշումներ:
- **Խորհրդարանական ժողովրդավարություն.** Խորհրդարանական ժողովրդավարության պայմաններում գործադիր իշխանությունը հաշվետու է

[5] Տեղեկություն համացանցից

խորհրդարանին, որը ներկայացնում է քաղաքացիներին: Խորհրդարանն ընտրվում է քաղաքացիների կողմից և պատասխանատու է որոշումներ կայացնելու և կառավարության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար:

- **Նախագահական ժողովրդավարություն.** Նախագահական ժողովրդավարության պայմաններում գործադիր իշխանությունը պատկանում է նախագահին, որն ուղղակիորեն ընտրվում է քաղաքացիների կողմից: Նախագահն անկախ իշխանություն ունի խորհրդարանից և պատասխանատու է որոշումներ կայացնելու և կառավարությունը ղեկավարելու համար[6]:

Այսպիսով ժողովրդավարություն նպաստում է քաղաքացիների մասնակցությանը, մարդու իրավունքների հարգմանը և կոլեկտիվ որոշումների կայացմանը: Այն ձգտում է երաշխավորել հավասարություն, արդարություն և ազատություն հասարակության բոլոր անդամների համար: Թեև ամբողջ աշխարհում կան ժողովրդավարության տարբեր ձևեր և մոդելներ, այս հիմնական սկզբունքները հաճախ հիմնարար են ցանկացած ժողովրդավարական համակարգում:

Քաղաքացիական հասարակություն

Քաղաքացիական կրթությունն առավել ընդգրկուն, շարունակական և երկարաժամկետ գործընթաց է (այն կարող է և պետք է ընդգրկի նաև ընտրական կրթությունը և հիմանականում կրթական ծրագրերի մեծ մաս է կազմում Քաղաքացիական կրթությունը (անվանում են նաև քաղաքացիության մասին կրթություն) ներառում է ժողովրդավարական հասարակության հիմնաքարային գաղափարներ, ինչպես քաղաքացիների համապատասխան իրավունքների ու պարտականությունների, կառավարության, քաղաքականության և հատուկ խմբերի շահերի, զանգվածային լրատվական միջոցների բիզնեսի ու ոչ առևտրային հատվածի մասին կրթություն, ինչպես նաև շեշտում են հերթական և մրցակցային ընտրությունների կարևորությունը

Քաղաքացիական կրթությունը՝ կրթություն է քաղաքացիության համար, այն է՝ կրթություն, որի նպատակն է՝ օգնել մարդկանց սովորել, թե ինչպես դառնալ ակտիվ, իրազեկ և պատասխանատու քաղաքացիներ: Ավելի ստույգ, քաղաքացիական կրթության նպատակն է

[6] Տեղեկություն համացանցից

պատրաստել ժողովրդավարության մեջ ապրող քաղաքացիներ, որը հիմնովին մարդու իրավունքների խնդիրն է:

Ընդհանրապես, համարվում է, որ քաղաքացիական հասարակությունը ներգրավում է երեք տարրեր,

քաղաքացիական իմացություն (գիտելիք)

• քաղաքացիական հմտություններ: Քաղաքացիական միտվածությունը ենթադրում է, որ քաղաքացիները

- քաղաքացիական միտվածություն (արժեքների .

Զարգացնում են իրենց ինքնավստահությունը, որպեսզի ընդունակ ու

կարող լինեն մասնակցել քաղաքացիական կյանքին

• Մասնակցում են քաղաքացիական կյանքին:

• Հասկանում են իրենց քաղաքական և քաղաքացիական համատեքստը:

. Գիտեն իրենց սոցիալական, տնտեսական և մշակութային, ինչպես նաև քաղաքական և քաղաքացիական իրավունքները:

• Հասկանում են քաղաքացիության դերերը, իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունները: Քաղաքացիական հմտությունները ենթադրում են, որ քաղաքացիները՝

• Ձեռք են բերում բացատրելու, վերլուծելու, հաղորդակցվելու, գնահատելու դիրքորոշումը պաշտպանելու, գործընթացն ու արդունքները վերահսկելու ունակություն:

Գիտելիքներն ու իմացություններն օգտագործում են քաղաքական և քաղաքացիական գործընթացներին իրազեկ մասնակցելու համար:[7]

Քաղաքացիական հասարակությունը շեշտադրում է ոչ միայն քաղաքացու իրազեկվածությունը, այլ նաև քաղաքացու մասնակցութոյնը՝ ժողովրդավարական հասարակության գործընթացներում: Քաղաքացիական կրթությունը, որպես կանոն, բաղկացած է հետևյալ երեք բաժիններից՝

քաղաքացիական գիտելիք,

[7] Քաղաքացի նախագիծ, համայնքային հիմնախնդիրների հետազոտման ուսումնական նախագիծ,Սիվիտաս- Հայաստան

քաղաքացիական արժեքներ

քաղաքացիական հմտություններ:

Այս համալիր ծրագիրը հնարավորություն է ընձեռում ստանալ համապատասխան գիտելիքներ և հմտություններ՝ իրազեկ և գիտակից քաղաքացի լինելու համար:

<<Քաղաքացիական դաստիարակության նպատակն է անձի մեջ քաղաքացիություն դաստիարակելը>>

Դպրոցը պետք է լինի ավելի բաց, պատրաստ վերափոխումների՝ իր գործունեության մեջ շեշտը դնի սովորողների գործունեության միջոցների յուրացման, <<սոցիալական» հմտությունների, կարողությունների ձեռք բերման վրա:

Դպրոց կրթություն-հասարակական - կառաավարման կարգ (տվյալ դեպքում ժողուրդավարություն) - քաղաքացիական հասարակություն ,կրթություն հարաբերություններ դառնում են մեկ փակ շրջանակ, որի փոխհամաձայնեցված և արդյունավետ գործունեության ապահովման մեջ շահագրգռված են հասարակության բոլոր խավերը՝ ծնողները, մանկավարժները, ղեկավարները և այլն:

Քաղաքացիական կրթությունը մեզ սովորեցնում է ճիշտ մտածել և ճիշտ գործել <<Նրանում արտահայտված է վարքի ամենաբարձր մոտիվացիան, որը որոշում է հասարակական պարտքով Քաղաքացիական պարտքը խթանում է մարդու սոցիալական ակտիվությունը՝ նրա կենսագործունեության բոլոր ոլորտներում և ամենիից առաջ իր սոցիալական հայրենքի շահերի պաշտպանության, իր քաղաքացիական պարտականությունների ազնիվ կատարման մեջ' աշխատանքում, հասարակական գործունեության մեջ>>

Այս թեմայի ուսումնասիրման ժամանակ կարելի է դասն անցկացնել հետևյակ կերպ

Դասի պլան.

Դասարան՝ IX

Առարկա՝ — հասարակագիտություն

Հիմնական հարցերը, որ դասին կքննարկվեն

•Ինչ եք հասկանում ժողովրդավարական պետություն ասելով:

• Ձեր կարծիքով ինչ է պետությունը:

• Որոնք են հզոր պետություն հասնելու ճանապարհները:

• Ներկայացնել քաղաքացիական հասարակությունը բացատրել ինչպես հասնել դրան:

Սովորողները կարողանան մեկնաբանել քաղաքացիական հասարակության նշանակությունը:

• Կարողանան գնահատել քաղաքացիական հասարակության և պետական իշխանության Ինստիտուտների փոխգործակցության անհրաժեշտությունը հանրային բարիքի ստեղծման համար: Դասի խնդիրները, որ մենք կդնենքն մեր առջև կլինեն բազմազան, բարիքի ստեղծման համար

Նպատակին հասնելու համար առաջակել եմ հետևյալ ուղիները

Սովորողը կարողանա ներկայացնել ժաողովրդավարական պետության արժեքները

• ԿԿարողաննա ներկայացնել քաղաքացիական հասարակության և կրթության անհրաժեշտությունը:

Հմտություն՝

Վերլուծեն պետության կարևորությունը

Մեկնաբանեն՝

Ինչ է պետությունը հասարակության կյանքում:

Մեկնաբանեն քաղաքացիական ու քաղաքական մասնակցության ՀՀ օրենսդրությամբ չարգելված ձևերն ու տեսակները ժողովրդավարության և անձի իրավունքների շահերրի իրացման տեսանկյունից:

. Ճանաչի և հարգի ՀՀ պետական խորհրդանիշները և ներկայացնի ու

վերլուծի ավանդական տոների հիմնական բովանդակությունը:

• Ճանաչի իր հայրենիքը, ներկայացնի տեղեկություններ Հայաստանի պատմության, մշակույթի մասին:

Դասի ժամանակ կարևոր է նաև սովրողի դաստիարակչությունը: Այս տեսանկյունից նրանց մոտ զարգանում են տարբեր արժեքների վերաբերմունք:

Արժեքներ՝ Կկարողանան արտահայտել և պաշտպանել սեփական տեսակետը և դիրքորոշումը, հարգել դիմացինի իրավունքները:

Վերաբերմունք՝

• ցուցաբերեն հանդուրժողականություն, հարգանք և մարդասիրություն:

• Այս ամենի արդյունքում սովորողների մոտ զարգանում է մտաժողությունը, երևակայությունը, հիշողությունը և ուշադրությոնը:

Դասը վարելու ժամանակ կարևոր է ուսումնադիտողական պարագաներ:

Դրանք են՝ դասագիրքը, ՀՀ Սահմանադրությունը, սահիկաշար, խճանկար համացանցը:Կարելի է օգտագործել նաև ընտրաթերթիկներ, քարտեր և այլն :

Ցանկալի է դիտել տեսանյութեր:

Ցանկալի է ներկայացնել իրավիճակային օրինակներ,որտեղ տեսանելի է պետությունում կոռուպցիայի առկայությունը և նրա բացասական ազդեցությունն անհատ–հասարակություն-պետություն բնականոն փոխազդեցության վրա: Սովորողներին հանձնարարել որպեսզի նրանք միջոցներ գտնեն կոռուպցիայի ռիսկերը նվազեցնելու համար:

Սովորողները կարող են համայնքային հիմնախնդիրները ուսումնասիրել քաղաքացիական հասարակության հաստատությունների և զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների միջոցով: Օրինակների միջոցով հիմնավորի տեղեկատվածության կարևորությունը քաղաքացիական հասարակության ձևավորման գործում:

Կարևոր է նաև միջառարկայական կապը: Դասը կարելի է կապել Հայոց պատմության հետ;

Ուսումնական մեթոդներից և հնարներից է խմբային աշխատանք:

Դասարանը բաժանում ենք երկու խմբի: Առաջին խումբը ներկայացնում է ժողովրդավարական . իսկ . երկրորդ քաղաքացիական հասարակություն: Դասին

օգտագործում ենք նաև գրտախտակ. արդյունքում սովորողները պետք է հիմնավորեն իրենց կարծիքները: Առաջնորդվելով մեր կողմից ներկայացված դասի պլանով ուսուցիչը հնարավորություն կունենա հասկանալու, թե որքանով են սովորողները պատկերցում կազմել թեմայի վերաբերյալ : Շատ կարևոր է, որ թեմայի ավարտին սովորողները ընդհանուր պատկերացում ունենան պետության և քաղաքացիական կրթության մասին: Պետության թեմայի անբաժան մասն է կազմում <<Քաղաքացիական հասարակությունը և կրթությունը» և սահուն կերպով անցնում ենք այս թեմային, ներկայացնում և լսում կարծիքներ:

Կարելի է կազմել հարցերի ցանկ՝ դասը ամփոփելու համար:

1. Բացատրե՞ք՝ ինչո՞ւ է անհրաժշտ պետությունը:

2. Բացատրե՞ք՝ ինչպե՞ս երկրում հաստատել ժողովրդավարություն

3. Ի՞նչն է իրավահավասարության իմաստը:

4. Ի՞նչ տեղի կունենա պետության բացակայության ժամանակ

5. Ո՞րն է խնդրի լուծումը քաղաքացիական կրթության մեջ

6. Ի՞նչ կլինի, եթե մարդիկ չլինեն իրավասհավասար:

7. Ուրիշ ի՞նչ տեսանկյունից կարելի է նայել պետությանը :

8. Ի՞նչ կպատահի, եթե պետությունը վերանա :

Անհրաժեշտությունից ելնելով կատարել ձևավորվող գնահատում:

Գնահատումը իրականացնում ենք նիշային և խրախուսական: Ի՞նչ գիտեի

Հարց ու պատասխանի միջոցով կարելի է պատկեր ունենալ ինչպես են յուրացրել նյութը: Ամբողջ դասը անցնելուց հետ սովորողների հետ կատարում ենք ընդհանրացում, համեմատում և ըմբռնում:

Արդյոք հասկացել են ժողովրդավարական պետություն և քաղաքացիական հասարակության նշանակությունը: Ապագայում արդյոք նրանք կկարողանա կիրառել իրենց անցածը կյանքում:

Սովորողներն էլ իրենց հերթին իրենց պարտավորված կզգան հարգել իրենց երկրի պետական խորհրդանիշները, հարգանք կունենան իրեն պետության նկատմամբ, սակայն

պետք է ցավով նշել, որ այսօրվա մեր սերունդը անտարբեր վերաբերմունք ունի իր, ինչպես նաև իր երկրի նկատմամբ, ինչն էլ դա մեզ տանում է կործանման, եթե արդեն չի տարել…

Եզրակացություն

Այս ամենից կարող ենք եզրակացնել, որ պետություն և պետականություն հասկացությունների նորովի մեկնաբանումը հնարավորություն է ընձեռնում ուսուցչին և սովորողներին գնահատելու՝ ելակետային գիտելիքները պետության և քաղաքացիական հասարակության վերաբերյալ ու կանխատեսել վերջնարդյունքները : Այսպիսով գիտելիքներն անիմաստ են , եթե դրանք չեն կիրառվում կյանքում :Սովորելը ավելի հեշտ է, քան ստացած գիտելիքները կյանքում կիրառելը:

Ի վերջո, « Հասարակագիտությունը» այն միակ առարկան է, որը կրթում և դաստիարակում է ապագայի քաղաքացուն, ով պետք է դիմակայի աշխարհի վայրիվերումներին ու համահունչ քայլի դարի հետ: Ուստի կարծում ենք, որ մենք՝ուսուցիչներս, ևս պետք է համընթաց քայլենք, չդադարենք ինքնակրթվել…

Գրականության ցանկ

1. Հանրակրթության մասին ՀՀ օրենքը:

2. Հանրակրթության պետական չափորոշիչ, հաստատված ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ:

3. Հանրակրթության պետական կրթակարգ, միջնական կրթության պետական չափորոշիչ, Երևան, «Անտարես», 2004:

4. Հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման կարիքի գնահատման ուսումնասիրություն, պատրաստվել է «Ի-Վի քոնսալթինգ» ՓԲԸ-ի և «Այբ» կրթական հիմնադրամի կողմից, ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» գրասենյակի պատվերով, Երևան, 2016:

5. Հասարակագիտություն: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի 8–րդ դասարանի համար/ Ա. Գյուլբուդաղյան, Կ. Հարությունյան, Տ. Թովմասյան.- Եր.: «Զանգակ» հրատ., 2018:

6. Հասարակագիտություն: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի 9–րդ դասարանի համար/ Գ. Ղազինյան Ա. Վաղարշյան: «Տիգրան մեծ» հրատ., 2018:

7. Ինչպես կարող են բոլոր ուսուցիչները օժանդակել քաղաքացիության և մարդու իրավունքների կրթությանը. կոմպետենցիաների զարգացման շրջանակ, Եվրոպայի խորհրդի հրատարակություն:

8. Մեթոդական ձեռնարկ «Հասարակագիտություն» առարկան դասավանդող ուսուցիչների համար, Կ. Հարությունյան, Գ. Վարդանյան.-, Կոնրադ Ադենաուեր Հիմնադրամ, Երևան 2020:

9. «Հասարակագիտություն», հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներ և ծրագրեր, Երևան 2009:

10. Համացանց